ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 03/2025/Վ/Վ

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 3 հունիսի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի նկատմամբ 2025 թվականի մարտի 10-ին վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 03/2025/Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2025 թվականի մարտի 3-ին Հանձնաժողով մուտքագրված՝ Փայլակ Թադևոսյանի դիմումը (այսուհետ՝ Դիմում), ինչպես նաև «Ֆակտոր.էյէմ» լրատվական կայքի՝ 2025 թվականի փետրվարի 28-ի՝ «Պապոյանն իր ընդդիմախոսներին համեմատել է շների հետ, ապա գրառումը հեռացրել» վերտառությամբ[1] (այսուհետ՝ Հրապարակում 1) և «Իրավաբան.նեթ» լրատվական կայքի՝ «ՓՄՁ ասոցիացիայի կառավարման խորհրդի բաց նամակը Նիկոլ Փաշինյանին» վերտառությամբ[2] (այսուհետ՝ Հրապարակում 2) հրապարակումները, 2025 թվականի մարտի 10-ին կայացրել է Գևորգ Պապոյանի կողմից վարքագծի

---

[1] Հասանելի՝ https://factor.am/885355.html

[2] Հասանելի՝ https://iravaban.net/512537.html

կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 03/2025/Վ/Վ որոշումը (այսուհետ նաև՝ Հարուցման որոշում):

1.2 Դիմումով և հրապարակումներով ներկայացված տեղեկատվության համաձայն՝

1.2.1. ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքի իր «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջում կատարել է հետևյալ բովանդակությամբ գրառում. *«Մինչ ոմանք ոռնում են Հայաստանի տնտեսական հաջողություններից, հերթական խոշորագույն ներդրումային ծրագիրը շուտով կմեկնարկի: Շունը հաչում է, քարավանը՝ գնում»* (այսուհետ՝ Գրառում 1): Գ.Պապոյանը նշված գրառումը կատարել է՝ կիսվելով Երևանում ԱՄՆ դեսպանության կատարած հրապարակմամբ առ այն, որ Ամուլսարի հանքարդյունաբերության ծրագիրը վերսկսվում է:

1.2.2. Հրապարակում 1-ի համաձայն՝ սոցիալական կայքում որոշ օգտատերերի դժգոհություններին ի պատասխան՝ Գ.Պապոյանը վերոնշյալ գրառման մեկնաբանություններում արձագանքել է՝ նշելով. *«Հարգելի և սիրելի քաղաքացիներ, հայտնի ասացվածքը վերբերում է որոշ նախկին պաշտոնյաների»:* Գ.Պապոյանը նույն օրը հեռացրել է գրառումը:

1.2.3. Հրապարակում 2-ի համաձայն՝ *«ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի» կառավարման խորհուրդը սույն թվականի մարտի 3-ին բաց նամակով դիմել է ՀՀ վարչապետին՝ նշելով. «Որպես փոքր և միջին ձեռնարկատերերի շահերը ներկայացնող, ՓՄՁ անդամության վրա հիմնված և Հայաստանում գործող հասարակական կազմակերպություն (այսուհետ ՓՄՁ Ասոցիացիա), մեզ համար լուրջ մտահոգության տեղիք է տվել վերջին շրջանում մեր երկրում տնտեսության զարգացման պատասխանատու գերատեսչության ղեկավարի հանրային հայտարարությունների բովանդակությունները:*

Մասնավորապես, ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը, իր ֆեյսբուք սոցիալական ցանցի պաշտոնական էջով (կից պատճեն) տեղադրում է պաշտոնական գրառումներ, որտեղ առկա են հանրության որոշ շերտերի, կամ անձանց, սեփական բնութագրմամբ, կշտամբող, նրանց կրթական կամ գիտական կոչումները հարցականի տակ դնող վիրավորական արտահայտություններ: Թվում է թե այդ գրառումներով ներկայացվում է պետության տնտեսական ինչ-որ ձեռքբերումներ, սակայն դրանք ներկայացվում է որպես այլ կարծիք ունեցող անձանց, փորձագետների կամ ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչների մինչ այդ արված տնտեսական վատատեսական կանխատեսումներին ի պատասխան արված քայլ, այլ ոչ թե ի պաշտոնե արված պարտականություն կամ գործառույթ: Եվ դրանք արվում են անձնական վիրավորանք՝ «ծակ պրոֆեսոր տնտեսագետներ, լրագրողներ, ինքնահռչակներ, ոռնացող ..» պարունակող բառերով (կից պատճեները):

Ելնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթներից, դրանից բխող և սահմանված վարքագծի կանոնագրքից, որպես ՀՀ կառավարության ղեկավար, խնդրում ենք Ձեզ, քայլեր ձեռնարկել, որպեսզի մեր երկրում հանրային պաշտոն զբաղեցնող, այդ թվում պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձն առաջին հերթին հենց օրինակով պահպանի իր պաշտոնին ներկայացվող նվազագույն պահանջները՝

(...)

Այս մասին, վերջին օրերին, նույն սոցիալական ցանցերով տարբեր ՀԿ ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք արդեն ներկայացրել են իրենց վրդովմունքը (որի հետևանքով ինչ որ գրառումներ խմբագրվեցին, կամ հեռացվեցին): Այս մասին, ենթադրվում է, որ ըստ մեր երկրում գործող օրենսդրության, պետք է քայլեր ձեռնարկեն նաև բարձրաստիճան պաշտոնյաների էթիկայի քննությամբ զբաղվող կառույցները:

Մենք ևս, որպես հանրության մի փոքր խումբ ներկայացնող կառույց, մեր դիրքորոշումը ներկայացրել և ներկայացնում ենք հանրային, բաց ոչ երբեք անձնական վիրավորանքներ պարունակող բառապաշարով, հակակշռելով և/կամ պահանջելով մեր երկրի պետական ինստիտուտների գործունակության, հեղինակության պահպանման համար:»:

1.2.4. Հրապարակում 2-ով նաև ներկայացվել են Գ.Պապոյանի՝ «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջում կատարված հետևյալ գրառումները, որոնց առնչությամբ գրվել էր «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի» կառավարման խորհրդի բաց նամակը, ի լրումն Գրառում 1-ի.

1.2.4.1. *«Ու մինչև իրենց ընդդիմադիր հռչակած որոշ ծակ պրոֆեսոր «տնտեսագետներ», «լրագրողներ» ու այլ ինքնահռչակներ ամբողջ տարի ոռնում ու գուժում էին տնտեսական ճգնաժամի մասին, պարզվեց, որ 2024-ին տնտեսական ակտիվությունը աճել է 8%-ով՝ 2023-ի նկատմամբ:*

Դուք շարունակեք նույն կերպ, թերևս այլ բան չեք էլ կարող ու չարժի էլ ձեզանից այլ բան ակնկալել, իսկ մենք տքնաջան, բառիս բուն իմաստով 6 օր, օրական 14-16 ժամ ռեժիմով կենտրոնացած ենք 2025-ի տնտեսական գործերի վրա:» (այսուհետ՝ Գրառում 2):

1.2.4.2. *«Սև հաշվապահություն սպասարկող մի հաշվապահական ծառայությունների դալալ, ում անունը հատուկ չեմ տալիս, որպեսզի չտարածեմ իր ապուշությունները, ամեն կերպ փորձում է ապացուցել, որ 20-րդ դարասկզբի վճարային միջոցները պետք է շարունակեն մնալ դոմինանտ 21-րդ դարում:*

Ըստ այդ դալալի, մենք պետք է շարունակեինք աշխատավարձ ստանալ դրամարկղից, չունենայինք աշխատավարձային քարտեր, չկարողանայինք անել օնլայն քաղաքակիրթ առևտուր, փոխարենը անեինք միայն թղթադրամով առևտուր, որ իր

հաճախորդներն էլ ՀԴՄ չտալով, սփվերային շրջանառություն ունենալով ապահովեին իրենց և դալալի բարեկեցությունը:

Ու այս տգիտությամբ էլ հպարտ-հպարտ հայտնվում են տարբեր ամբիոններում ու էկրաններին:

Զարմանալու ոչինչ չկա, մարդկության պատմության ընթացքում հետադիմությունն ու խավարամտությունը անմոռուն պայքար են տվել առաջընթացի դեմ ու միշտ, առանց բացառություն, պարտվել»: (այսուհետ՝ Գրառում 3):

1.2.4.3. *«Մինչ ոմանք «տանջվում» են Հայաստանի տնտեսական հաջողություններից, հերթական խոշորագույն ներդրումային ծրագիրը շուտով կմեկնարկի:*

Շունը հաչում է, քարավանը՝ գնում (վերաբերվում է որոշ նախկին պաշտոնյաների):» (այսուհետ՝ Գրառում 4):

1.3. Հանձնաժողովի կողմից 2025 թվականի մարտի 13-ին թիվ 01/1061-2025 գրությամբ Որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Գևորգ Պապոյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Նշված գրությունը Գևորգ Պապոյանը ստացել է 2025 թվականի մարտի 17-ին (հիմք՝ AL0127037458AM փոստային անդորրագիր):

1.4. 2025 թվականի մարտի 24-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-1705-2025 գրությամբ Գևորգ Պապոյանը ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ՝ Դիրքորոշում):

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի մարտի 24-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-1705-2025 գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ Գևորգ Պապոյանը Դիրքորոշում է ներկայացրել առ այն, որ.

Բացարձակապես համաձայն չէ Հանձնաժողովի հետ, որ կան վարույթ հարուցելու հիմքեր և առհասարակ ունի ողջամիտ կասկած, որ Հանձնաժողով ներկայացված դիմումները հանդիսանում են իր դեմ որպես քաղաքական գործիչ իրականացվող հակաքարոզչության արշավի մաս, որի նպատակն է ազդել իր քաղաքական և պետական-պաշտոնական որոշումների վրա: Այլ հարց է, որ դա թերևս աշխարհի ամենաանիմաստ և անօգտակար աշխատանքներից մեկն է:

Դիրքորոշմամբ նշվել է, որ քանի որ իր դեմ ուղղված այս արշավը համարում է բացարձակապես քաղաքական և նպատակ ունի առաջին հերթին քաղաքական գործիչ, ՀՀ Ազգային Ժողովի 7-րդ և 8-րդ գումարումների պատգամավոր, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության վարչության նախագահի տեղակալ Գևորգ Պապոյանի

քաղաքական խոսքը սահմանափակել, ինչպես նաև ազդեցություն ունենալ քաղաքական պաշտոն զբաղեցնող էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի կայացրած քաղաքական որոշումների վրա, ապա հենց այդ տրամաբանությամբ էլ կներկայացնի պարզաբանումներ խնդրո առարկայի մասին:

Դիրքորոշմամբ նշվել է, որ դիմումատուներից մեկի՝ «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի» (այսուհետ՝ Ասոցիացիա) և նրա ղեկավար Հակոբ Ավագյանի հետ Գ.Պապոյանն ունի աշխատանքային ամենշաբաթյա հարաբերություններ և ունի ողջամիտ կասկածներ, որ Ասոցիացիայի կողմից Հանձնաժողովին ուղղված դիմումը նպատակ ունի իրենց կողմից ազդել Գ.Պապոյանի՝ որպես էկոնոմիկայի նախարարի, որոշումների կայացման վրա: Մասնավորապես ինքը, որպես ՀՀ էկոնոմիկայի նախարար և պարոն Ավագյանը, որպես Ասոցիացիայի Կառավարման խորհրդի նախագահ, հանդիսանում են փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ գործող ՓՄՁ պետություն-մասնավոր երկխոսության հարթակի (այսուհետ՝ Հարթակ) անդամներ, որտեղ պարոն Ավագյանը, Գ.Պապոյանի էկոնոմիկայի նախարար դառնալուց հետո, մշտապես բողոքել է էկոնոմիկայի նախարարության և անձամբ իր դիրքորոշումներից՝ կապված Հ.Ավագյանի կողմից բարձրացված հարցերի հետ: Վերոնշյալը կարող են հաստատել Հարթակի արձանագրությունները և այլ անդամներ: Գ.Պապոյանը նշել է, որ ունի ողջամիտ կասկածներ, որ այս եղանակով փորձ է կատարվում «ճնշում» գործադրել իր վրա՝ որպեսզի տնտեսական քաղաքականությունների որոշման հարցում էկոնոմիկայի նախարարությունը և անձամբ նախարարը գնա «զիջումների»՝ կապված Ասոցիացիայի առաջարկների հետ: Սակայն այս մասով նորից չի կարող չարձագանքել, որ սա անօգուտ աշխատանք է: Էկոնոմիկայի նախարարությունը և անձամբ Գ.Պապոյանը պատրաստ են հանդիպել ցանկացած հարցի բոլոր շահագրգիռ կողմերի հետ, սակայն որևէ այլ ազդեցություն իր որոշումների վրա չեն կարող զրոյականից բարձր ազդեցություն ունենալ, բացառություն են կազմում մասնագիտական խորը հիմնավորվածություն ունեցող վերլուծությունները:

Ավելին, պարոն Ավագյանը տնտեսական քաղաքականությունների մասին իր և Գ.Պապոյանի տարբեր պատկերացումների ու մոտեցումների մասին հրապարակային խոսել է նաև իր մասնակցությամբ Կառավարության դիմաց բողոքի ակցիաների ժամանակ, օրինակ արտահայտվելով՝ «էս էկոնոմիկայի նախարարը» և նմանատիպ այլ արտահայտություններով: Դիրքորոշմամբ ներկայացվել են նշված հավաքների ընթացքում Հ.Ավագյանի խոսքերի հղումները՝ https://archive.yerevan.today/all/social/150076/ka-pmdz-i-xndir-ou-petoutyoun,-ory-chi-lsoum%E2%80%A4%20hakob-avagyan, https://yerkir.am/hy/article/2025/01/13/285523:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Հակոբ Ավագյանը քաղաքական գործիչ է, զբաղվել է ակտիվ քաղաքականությամբ, 2018-2019թթ. եղել է ՀՀ տնտեսական

զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, այնուհետև առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար, իսկ այժմ ակտիվորեն մասնակցում է Կառավարության դեմ տարբեր տեսակի բողոքի ակցիաների՝ ընդդեմ Կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունների:

Դիրքորոշմամբ նշվել է, որ դիմումատուներից մյուսին՝ Փայլակ Թադևոսյանին, Գ.Պապոյանը ճանաչում է դեռևս 2019 թվականից, երբ նա ակտիվ պայքար էր տանում ընդդեմ Գ.Պապոյանի կողմից անկանխիկ գործառնությունների զարգացմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունների: Փայլակ Թադևոսյանը, ով հանդիսանում է «Հարկ վճարողների պաշտպանություն» հ/կ նախագահը, ինչպես նաև հաշվապահական ծառայություններ մատուցող մասնավոր առևտրային կազմակերպության ղեկավար, բազմաթիվ առիթներով աչքի է ընկել Գ.Պապոյանի հասցեին տարատեսակ վիրավորական գրառումներով իր սոցիալական ցանցի էջերում, սակայն դրանց Գ.Պապոյանը չի անդրադարձել՝ քաղաքացու խոսքի ազատության սկզբունքին հավատարիմ լինելու պատճառով: Այսինքն Փայլակ Թադևոսյանը ևս ունի շահերի բախում այս հարցում, քանի որ Գ.Պապոյանի կայացրած քաղաքական-տնտեսական որոշումները, ինչպես ԱԺ-ում, այնպես էլ Էկոնոմիկայի նախարարությունում վերաբերվում են ուղղակիորեն Փ.Թադևոսյանի մասնավոր շահերին: Դիրքորոշմամբ նշվել է, որ Գ.Պապոյանն ունի ողջամիտ կասկածներ, որ Փայլակ Թադևոսյանը, ով ակտիվորեն հանդես է գալիս հարկային օրենսգրքում տարատեսակ փոփոխությունների կողմ կամ դեմ՝ կախված նպատակահարմարությունից, փորձ է կատարում այս եղանակով ազդել Գ.Պապոյանի վրա՝ որպեսզի վերջինս իր տնտեսական քաղաքականության հետ կապված որոշումները համաձայնեցնի որոշակի շրջանակի շահառուների հետ (ենթադրաբար Փ.Թադևոսյանի հետ), որը անիմաստ և անօգուտ աշխատանք է, եթե իհարկե չեն ներկայացվում գիտականորեն հիմնավորված վերլուծություններ, ինչպիսիք Գ.Պապոյանը, ցավոք, այդպես էլ չի ստացել Փ.Թադևոսյանի կողմից: Ավելին, Փայլակ Թադևոսյանի նախորդ տարիներից սկսված ու դեռ շարունակվող սոցցանցային գրառումային «արշավները» Գ.Պապոյանի դեմ վերջինիս կարծիքով հենց այդ նպատակն են ունեցել և ունեն: Դիրքորոշմամբ նշվել է, որ Գ.Պապոյանի վրա նման եղանակներով ազդել չի ստացվի:

Ընդ որում, Փ. Թադևոսյանը իր բազմաթիվ գրառումներում անդրադարձել է նաև Գ.Պապոյանի քաղաքական գործունեությանը, քննադատել Գ.Պապոյանին որպես քաղաքական գործիչ, երբեմն տարածել մամուլում Գ.Պապոյանի կողմից հերքված նյութեր կամ մտքեր, որոնք նպատակ ունեն հասցնել վնաս նրա քաղաքական գործունեությանը:

Դիրքորոշմամբ նշվել է, որ անդրադառնալով «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» այսպես կոչված «պաշտոնական էջի» գաղափարին՝ շատ տարօրինակ է,

որ այս մտքի հեղինակը Հանձնաժողովն է, քանի որ վերջինս իր որոշման մեջ գրել է մի բան, որը իրականության մեջ չկա: Մասնավորապես նախ անհայտ է՝ ինչ է «պաշտոնական էջը», եթե Հանձնաժողովը ի նկատի ունի Ֆեյսբուք սոցիալական ցանցի verified նշանը, ապա այն բացակայում է, էջը քաղաքական գործչի, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության վարչության նախագահի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ, էկոնոմիկայի նախարարի քաղաքական պաշտոնը զբաղեցնող Գևորգ Պապոյանի անձնական էջն է (չկա որևէ նշում նրա մասին, որ դա պաշտոնական էջ է), որը բացվել է 2018թ. խորհրդարանական ընտրություններից անմիջապես առաջ՝ նոյեմբեր ամսին, երբ Գ.Պապոյանը սկսել է զբաղվել ակտիվ քաղաքականությամբ, եղել է ԱԺ պատգամավորի ռեյտինգային և համամասնական ընտրակարգով թեկնածու և այն Գ.Պապոյանի և իր ընտրողների, համակիրների և ՀՀ քաղաքացիների միջև Գ.Պապոյանի հիմնական քաղաքական խոսքի փոխանցման և փոխանակման եղանակն է, որի միջոցով, որպես էկոնոմիկայի նախարար՝ Գ.Պապոյանը նաև տեղեկացնում է իր քաղաքական գործունեության և նախարարության քաղաքականությունների մասին, իսկ նախկինում տեղեկացրել է իր խորհրդարանական աշխատանքի մասին, ապագայում էլ՝ հետագա քաղաքական գործունեության: Դիրքորոշմամբ նշվել է, որ Գ.Պապոյանը կարծում է, որ սա թերևս Հանձնաժողովի կողմից վրիպակի արդյունք է, հակառակ դեպքում համարում է, որ սա ևս իմ քաղաքական ակտիվության և գործունեության վրա բացասական եղանակով ազդելու միջոց է, քանի որ Կուսակցության վարչության նախագահի տեղակալ էկոնոմիկայի նախարարը չի կարող քաղաքական գործունեությամբ չզբաղվել և քաղաքական հայտարարություններ չի կարող չանել:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Գ.Պապոյանն առաջին հերթին քաղաքական գործիչ է, զբաղվում է ակտիվ հանրային քաղաքականությամբ, հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նախագահի տեղակալը և կարծում է, որ քաղաքական խոսքը չպետք է սահմանափակվի ՀՀ-ում և առավել ևս Հանձնաժողովի կողմից նման վտանգավոր նախադեպի ստեղծումը համարում է ուղղակի միջամտություն քաղաքական գործընթացներին՝ հատկապես 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Սա կարևոր է նաև այն համատեքստում, որ Գ.Պապոյանը այժմ զբաղված է ակտիվ կուսակցաշինական աշխատանքով, ներգրավված է Գյումրու և Փարաքարի ՏԻՄ ընտրությունների շտաբներում և պատրաստվում է առաջադրվել 2026-ին որպես ԱԺ պատգամավորի թեկնածու, ինչպես նաև 2025թ. սեպտեմբերին սպասվող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նոր վարչության անդամության թեկնածու:

Գ.Պապոյանը համարում է բնական, որ քաղաքական գործչի խոսքը կարող է համեմվել դարձվածքներով, ասացվածքներով, փոխաբերական իմաստ արտահայտող բառերով և նման բառապաշարի վրա սահմանափակում դնելը համարում է

քաղաքական գործչի՝ քաղաքականությամբ զբաղվելու վրա սահմանափակումներ դնել, ինչը գնահատում է որպես ոչ իրավաչափ: Քաղաքական գործչի խոսքի վրա փոխաբերական իմաստով գրական հայերեն բառերի օգտագործման իրավունքի սահմանափակում համարում է արհեստական միջամտություն ընտրական և քաղաքական գործընթացներին՝ դրանով իսկ ժողովրդին զրկելով հաղորդակցության պարզ, հասկանալի և ընդունելի եղանակներից: Իր խոսքերը ուղղված չեն եղել որևէ անձի դեմ, բնութագրել են երևույթներ, հետևաբար չէին կարող վիրավորել կամ նսեմացնել առանձին անձանց պատիվն ու արժանապատվությունը, ինչպես նաև նախարարության հեղինակությունը, որովհետև դրանք, ընդհակառակը, եղել են ի պաշտպանություն նախարարության հարյուրավոր աշխատակիցների կատարած անձնվեր աշխատանքի, քանի որ բազմիցս հրապարակումներ էին եղել, որոնք միտված էին նսեմացնելու այդ աշխատանքը: Ավելին, քաղաքական խոսքի հստակ սահմաններ չկան, Գ.Պապոյանը չի գտել որևէ պաշտոնական և ոչ պաշտոնական նյութ, այդ թվում Հանձնաժողովի կողմից հրապարակված, որտեղ քաղաքական գործիչը իրավունք չունի օգտագործել կոնկրետ բառեր փոխաբերական իմաստով կամ ասացվածքներ ու դարձվածքներ: Հանձնաժողովի կողմից հրապարակված վարքագծային կանոններում ևս չկա որևէ հստակ սահման, թե ինչպիսի՞ բառեր կարող են օգտագործել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք և ինչպիսին՝ ոչ, ինչը, իհարկե, տալիս է հնարավորություն շատ ընտրողական մոտենալ տարբեր պաշտոնյաների և քաղաքական գործիչների հրապարակային խոսքին: Հուսով է, որ Հանձնաժողովը մշտապես կմնա իր մասնագիտական բարձրունքում և երբևէ փորձ չի կատարի միջամտել քաղաքական պրոցեսներին՝ իր որոշումներով սահմանափակելով քաղաքական խոսքը և կամ վնասի քաղաքականությամբ զբաղվող, քաղաքական գործընթացներում ակտիվ ներգրավված այս կամ այն քաղաքական պաշտոնյայի հեղինակությանը: Հետևաբար ստեղծված գործընթացը համարում է մաքուր քաղաքական գործընթաց՝ կապված 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների հետ և հուսով է՝ Հանձնաժողովը իր որոշմամբ չի ստեղծի նախադեպ՝ Հայաստանում քաղաքական խոսքի ազատության սահմանափակման ուղղությամբ՝ ջուր լցնելով Գ.Պապոյանի քաղաքական ընդդիմախոսների ջրաղացին:

Ավելին, որպես քաղաքական գործիչ, կարծում է՝ նման նամակները էականորեն խոչընդոտում են Հանձնաժողովի հիմնական գործառույթի իրականացման. այն է թույլ չեն տալիս Հանձնաժողովին կենտրոնանալ իր կարևորագույն գործառույթի՝ կոռուպցիայի դեմ պայքարի վրա և ոչ թե անիմաստ ժամանակ վատնի՝ իրենից անկախ սպասարկելով քաղաքական տարբեր ճաշակներ ունեցող անձանց և առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների օրակարգերը:

Ինչ վերաբերվում է այն դիտարկմանը, թե ինչու է Գ.Պապոյանը նկարի 1-ին էջում ՀՀ դրոշի կողքի, կամ մեկ այլ նկարում ՀՀ տարածքի ուրվագիծը, ապա տեղեկացնում

է, որ որպես ՀՀ քաղաքացի չի պատրաստվում մեկ այլ երկրի պետական դրոշի կողքին նկար հրապարակի, իսկ 29743 քմ կմ տարածք ունեցող ՀՀ տարածքի ուրվագիծը Իրական Հայաստանի տարածքն է, որ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության քաղաքական գաղափարախոսության առանցքն է, իսկ Արագածը՝ Իրական Հայաստանի՝ անկախ Հայաստանի Հանրապետության, ամենաբարձր լեռն է:

Դիրքորոշմամբ Գ.Պապոյանը նաև անդրադարձել է իր քաղաքական խոսքը ավելի հարուստ դարձնող ասացվածքներին, դարձվածքներին և փոխաբերական իմաստ ունեցող բառերին: Մասնավորապես, նշվել է, որ «շունը հաչում է, քարավանը՝ գնում» ասացվածքը սովորաբար օգտագործվում է արտահայտելու բանախոսի պատրաստակամությունը շարունակելու իր աշխատանքը[3]՝ չնայած չարամիտ ու անիմաստ քննադատությանը: Հետևաբար, Գ.Պապոյանը սա որևէ կերպ չի կարող համարել վիրավորական արտահայտություն, առավել ևս, որ այն ուղղված չէ կոնկրետ մարդու կամ մարդկանց: Այս ասացվածքը տարածված է հատկապես արաբական և իրականական ժողովուրդների մոտ, ինչպես նաև համաշխարհային գրականության մեջ: Դիրքորոշմամբ որպես աղբյուր վկայակոչվել է «Վիկիպեդիա» հարթակը[4]: Այս մասով ամբողջովին համաձայն է Հանձնաժողովի կողմից իրեն ուղարկված նամակում արված այն մեկնաբանության հետ, որ դարձվածքում ներկայացվող առանձին բառերի նշանակությունները էական չեն դարձվածքի մեկնաբանությունը գնահատելիս: Հետևաբար այս հանգամանքը ևս բացարձակապես անընդունելի է համարում որպես վարույթի հիմք ընդունելը:

Հաջորդիվ Դիրքորոշմամբ Գ.Պապոյանը անդրադարձել է «ծակ պրոֆեսոր» արտահայտությանը, որը ևս համարում է շատ օգտագործելի քաղաքական գործիչների համար: Դիրքորոշմամբ նշվել է, որ, համացանցում որոնելու արդյունքում տեսնում ենք, որ բազմաթիվ քաղաքական գործիչներ և պաշտոնյաներ իրենց խոսքում օգտագործում են այս դարձվածք արտահայտությունը: Սա ժողովրդախոսակցական ձև է: Այս համատեքստում այն արհամարհական նշանակություն չունի, պարզապես նկարագրում է իրավիճակ, երբ կամայական մարդը չունի բավարար փորձառություն թեմայի մասին և հանրությանը տրամադրում է մեղմ ասած ոչ այնքան արժանահավատ

---

[3] Koirat haukkuvat, karavaani kulkee // Ольга Храмцова. Финские пословицы и поговорки и их русские аналоги. КАРО, СПб., 2011. ISBN 978-5-9925-0661-7 С. 61. (рус.)

[4] Հասանելի՝ https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BE%D0%B1%D0%B0%D0%BA%D0%B0_%D0%BB%D0%B0%D0%B5%D1%82,_%D0%B0_%D0%BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0%D0%BD_%D0%B8%D0%B4%D1%91%D1%82#:~:text=%D0%A1%D0%BE%D0%B1%D0%B0%D0%BA%D0%B0%20%D0%BB%D0%B0%D0%B5%D1%82%2C%20%D0%B0%20%D0%BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0%D0%BD%20%D0%B8%D0%B4%D1%91%D1%82%20(%D1%81%D0%BE%D1%8E%D0%B7%20%C2%ABa%C2%BB%20%D1%87%D0%B0%D1%81%D1%82%D0%BE,%D0%BD%D0%B0%20%D0%B7%D0%BB%D0%BE%D0%B1%D0%BD%D1%83%D1%8E%20%D0%B8%20%D0%B1%D0%B5%D1%81%D1%81%D0%BC%D1%8B%D1%81%D0%BB%D0%B5%D0%BD%D0%BD%D1%83%D1%8E%20%D0%BA%D1%80%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA%D1%83.

տեղեկատվություն: Ինչպես նախորդիվ նշել էր, դարձվածքներում առկա բառերը չի կարելի դիտարկել իրենց առանձին իմաստներով, ինչպես այս պարագայում «ծակ» և «պրոֆեսոր» բառերը, և պետք է դիտարկել այս համադրության մեջ՝ որպես առանձին իմաստ: Այս համատեքստում իր գրառումները համարում է հանրօգուտ աշխատանք, որոնք միտված են հասարակության լայն շերտերին իրազեկելուն և մատուցվող կեղծ ու սուտ տեղեկատվությունից զատ այլընտրանքային ճշմարիտ տեղեկատվություն տալուն, ուստի բացարձակապես անընդունելի է համարում այս հանգամանքը ևս վարույթի իրականացման հիմք ընդունելը:

Դիրքորոշման համաձայն՝ ապուշություն բառը նորից որևէ անձի ուղղված չէ եղել, ավելին մտքի կոնտեքստում այն հնչել է ընդհանրական՝ ներկայացնելով իրավիճակի ոչ խելամիտ լինելը, և չի ունեցել վիրավորական նշանակություն կամ այդպիսի իմաստ: Այս բառի ամենատարածված հոմանիշներն են հիմարությունն ու անմտությունը, որոնք, ապուշության հետ միասին որևէ կերպ չեն կարող համարվել անօգտագործելի հանրային ծառայության կամ քաղաքական պաշտոնյաների համար, քանի որ գրական հայերենում օգտագործվող բառեր են, որոնք նկարագրում են ոչ խելամիտ իրավիճակ, երևույթ: Սակայն զարմանալիորեն Հանձնաժողովը չի նկատել այս հոմանիշները և այլ հոմանիշներ է բերել վարույթ հարուցելու հիմնավորման մեջ: Հետևաբար այս մասով ևս բացարձակապես անհիմն է համարում վարույթ հարուցելու հիմքը:

Դիրքորոշմամբ նշվել է, որ ոռնալ բառի դեպքում օգտագործումը ևս ունի նույն բացատրությունը. այն Գ.Պապոյանի կողմից օգտագործվել է փոխաբերական իմաստով՝ չակերտների մեջ: Նախ մարդը չի կարող ոռնալ, ինչպես, օրինակ, քամին չի կարող ոռնալ, սակայն փոխաբերական իմաստով այն օգտագործվում է տարբեր իմաստներով, ինչպիսին է գոռում-գոչյում բարձրացնել կամ ուժգին ձայն արձակել[5]: Այս համատեքստում «ոռնալ» բառը փոխաբերական իմաստով նշանակում է բարձրաձայն, գոռում գոչյումով քննադատել: Այս առումով հենց սա է նկատի ունեցել, հատկապես երբ բառը գրել է չակերտների մեջ՝ դրանով իսկ ընդգծելով փոխաբերական բնույթը:

Դալալ բառը նույնպես բարբառային բառ է, չունի բացասական դրսևորում և ուղղված չէ որևէ անձի նկատմամբ: Կարծում է՝ քաղաքական խոսքը ավելի ազդեցիկ, հետաքրքիր դարձնելու համատեքստում կարևոր է, հատկապես, եթե այն ուղղված չէ կոնկրետ անձի դեմ: Այն օգտագործվել է փոխաբերական իմաստով, սակայն անգամ ոչ փոխաբերական իմաստով՝ այն է՝ «փողոցում բարձր ձայնով լուրեր հայտնող վաճառական» չունի որևէ բացասական իմաստ:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Գ.Պապոյանի գրառումներում բերված դարձվածքները, փոխաբերական իմաստով արտահայտված բառերը հայոց լեզվում տարածված են որոշակի երևույթների գեղարվեստական մեկնաբանություն տալու հարցում, ինչի օգտագործումը հրապարակային քաղաքականությամբ զբաղվող

---

[5] Հասանելի՝ https://hy.wiktionary.org/wiki/%D5%B8%D5%BC%D5%B6%D5%A1%D5%AC

քաղաքական գործչի համար բնական երևույթ է համարում: Իսկ բողոքի հեղինակ անձինք նշված բողոքները հայտնելիս, ինչպես վերը նշել է, ունի ողջամիտ կասկածներ, որ ունեն անձնական մոտիվներ, որի նպատակը ոչ թե նախարարության կամ հանրային իշխանությանը մարմնի գործունեության անվան բարձր պահելն է, այլ քաղաքական գործիչ Գևորգ Պապոյանի համբավին վնաս հասցնելը և Գ.Պապոյանին ստիպելը, որ իր քաղաքական, այդ թվում որպես նախարար, գործունեության մեջ նրանց ցանկացած կարծիքի հետ, այդ թվում Գ.Պապոյանի կողմից անհիմն համարվող, հաշվի նստի, ինչը, նորից է կրկնում, անհնար է: Առհասարակ, ցանկանում է նշել, որ շանտաժի, իրեն վախեցնելու, կաշառելու և նման այլ գործունեությունը անիմաստ ժամանակի վատնում է:

Դիրքորոշմամբ նաև նշել է, որ իր գրառումները միտված են եղել ներկայացնել հանրային ծառայության մեջ ներգրավված մարդկանց մեծ աշխատանքը և դրանք միտված են եղել հենց հանրային ծառայության հեղինակությունը բարձրացնելուն: Մասնավորապես իր գրառումներում նշել է, որ արձանագրված արդյունքը էկոնոմիկայի նախարարության, Կառավարության և առհասարակ պետական համակարգի հազարավոր աշխատակիցների անխոնջ աշխատանքի արդյունք է:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 Հանրապետության նախագահի 2024 թվականի մարտի 5-ի թիվ ՆՀ-76-Ա հրամանագրով Գ.Պապոյանը նշանակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարար և պաշտոնավարում է մինչ օրս:

3.2 «Ֆեյսբուք» սոցիալական կայքում Գևորգ Պապոյանի «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջում, որով կատարվել են վարույթի շրջանակներում քննարկման առարկա գրառումները, նշված է, որ վերջինս ՀՀ էկոնոմիկայի նախարարն է, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության վարչության փոխնախագահը, տ.գ.թ., դոցենտ:

3.3 Հանձնաժողովի ուսումնասիրությունները վկայում են, որ Գրառում 1-ը կատարվել է սույն թվականի փետրվարի 28-ին, այնուհետև՝ նույն օրը, խմբագրվել է Գրառում 4-ի տեսքով և հեռացվել է: Գրառում 2-ը կատարվել է 2024 թվականի դեկտեմբերի 16-ին, իսկ Գրառում 3-ը՝ սույն թվականի հունվարի 31-ին:

IV. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի համաձայն.

«(...)

2. Հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:»:

3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: (...)»:

4.2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Պետական քաղաքական պաշտոններն են (...) նախարարների (...) պաշտոնները, (...) :»:

4.3. Օրենքի 25-րդ հոդվածով սահմանվում է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և նախատեսվում է.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս: (...)»:

4.5. Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

4.6. Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:»:

4.7. Վարքագծի կանոնագրքի 4-րդ բաժնի 1-ին գլխով նախատեսվում են բարեվարքության և հարգալիրության սկզբունքից բխող՝ զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական մեդիայով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հաղորդակցությանը վերաբերելի վարքագծի կանոնները:

4.8. Նշված գլխում ներառված՝ Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի համաձայն.

«48. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը:»:

4.9. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):

(...)»:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Հանձնաժողովը հարկ է համարում նախ ընդգծել, որ Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտում արձանագրելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ սոցիալական մեդիայում հանրային պաշտոն զբաղեցնող անձի վարքագիծը հեղինակազրկել է հանրային իշխանության մարմնի գործունեությունը կամ կարող էր վնասել, նսեմացնել կամ արատավորել հանրային ծառայության հեղինակությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ նման ազդեցությունը հնարավոր է հետևյալ երկու դեպքում՝

1) հանրային պաշտոն զբաղեցնող անձը իր գրառումներով կամ սոցիալական մեդիայում այլ վարքագծով կասկածի տակ է դրել, քննադատել է, այլ կերպ բացասական

լույսի ներքո է դիտարկել հանրային իշխանության որևէ մարմնի գործունեությունը կամ առանձին գործողությունը կամ

2) հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ սոցիալական մեդիայում վարքագիծը հանգեցրել է բարեկրթության և հարգալիրության սկզբունքի խախտման, և նման խախտումը ողջամտորեն կարող էր խիստ բացասաբար ընկալվել հանրության կողմից՝ այդպիսով վնասելով, նսեմացնելով կամ այլ կերպ արատավորել հանրային ծառայության հեղինակությունը:

Սույն վարույթի շրջանակներում քննարկվող գրառումներով Գ.Պապոյանը բացասական լույսի ներքո չի քննարկել հանրային իշխանության որևէ մարմնի գործունեությունը կամ առանձին գործողությունը, ուստի Հանձնաժողովը հարկ է համարում քննարկել՝ **արդյոք Գ.Պապոյանի գրառումները խախտել են բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և ողջամտորեն կարող էին խիստ բացասաբար ընկալվել հանրության կողմից:**

Ըստ այդմ, նկատի ունենալով, որ վարույթի շրջանակներում քննարկվում է Գևորգ Պապոյանի կողմից կատարված գրառումների իրավաչափության հարցը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

(...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է: **Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են:** Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով կիրառվող՝ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը ենթադրում է «հրատապ սոցիալական պահանջի» առկայություն: Այս առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի անդամ պետությունները նման պահանջի առկայությունը գնահատելիս որոշակի հայեցողություն ունեն:[6]

---

[6] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13,

Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ սկզբունքները չեն բացառում հնարավորությունը, որ որոշ արտահայտություններ կարող են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո տրամադրվող պաշտպանության շրջանակից դուրս լինել: **Փաստացի տվյալները կամ արժեքների կամ զգացմունքների վերաբերյալ պնդումները կարող են պաշտպանվել 10-րդ հոդվածով, եթե դրանք, օրինակ, արտահայտում են անձի համոզմունքները կամ ինքնությունը կամ նպաստում են հանրային կարծիքի ձևավորմանը, միաժամանակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ նույնը վերաբերելի չէ վիրավորանքներին, որոնց պաշտպանության համար անհրաժեշտ են համոզիչ պատճառներ:**

Այս առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ 10-րդ հոդվածի պաշտպանության ներքո գերազանցապես ընդգրկվում են կարծիքների արտահայտումը և տեղեկատվության ու գաղափարների տրամադրումն ու ստացումը, որը ներառում է քննադատական արտահայտություններն ու դիտարկումները: Միաժամանակ, խոսքի որոշ դրսևորումներ, ինչպիսիք են **անպարկեշտ կամ անվայել արտահայտությունները, գաղափարների արտահայտման տեսանկյունից էական դերակատարում չունեն: Վիրավորական արտահայտությունը կարող է դուրս լինել արտահայտման ազատության պաշտպանության շրջանակից, եթե նման արտահայտությունը չարամիտ վիրավորանք է պարունակում և դրա միակ նպատակը վիրավորելն է:**[7]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ **պետք է հստակ տարանջատում կատարվի քննադատության և վիրավորանքի միջև: Եթե խոսքի ցանկացած դրսևորման նպատակը պարզապես վիրավորելն է, ապա համաչափ սանկցիան, որպես կանոն, չի հանգեցնի Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման:** Միաժամանակ, միայն վիրավորական կամ կոպիտ արտահայտությունների ենթատեքստի մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով է, որ հնարավոր կլինի կատարել նման տարանջատումը:[8]

Անգամ այն դեպքում, երբ վիրավորական արտահայտություններ ներառող խոսքն ունեցել է նաև այլ նպատակներ, օրինակ, հակադարձելու անձի հասցեին հնչած մեղադրանքներին կամ քննադատությանը, այն կարող է հատել իրավաչափության սահմանը: Այսպես, օրինակ, Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմումատուն իր խոսքում, որն ունեցել էր պետության նախագահի հասցեին հնչեցված մեղադրանքներին արձագանքելու

44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

[7] Տես, օրինակ, Ռուջակն ընդդեմ Խորվաթիայի (Rujak v. Croatia) գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 57942/10, §§ 27-29

[8] Տես, օրինակ, Գասպարին ընդդեմ Հայաստանի (Gaspari v. Armenia (No. 2)) գործով 2023 թվականի հուլիսի 11-ի վճիռը, դիմում no. 67783/13, § 27, Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի (Mesić v. Croatia) գործով 2022 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմում no. 19362/18, § 33

նպատակ, վերջինս իրեն քննադատող անձի հասցեին նշել է, որ նա հոգեբուժական օգնության կարիք ունի:

Եվրոպական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ տվյալ արտահայտությունը հնչեցվել է պետության ղեկավարի կողմից և լայնորեն տարածվել է մի շարք զանգվածային լրատվության միջոցների կողմից, ուստի այն կարող էր անխուսափելիորեն վնասել հասցեատիրոջ հեղինակությունը և նրա նկատմամբ կանխակալ վերաբերմունք ձևավորել՝ անկախ այն հանգամանքից՝ արտահայտությունը կատարվել է ուղիղ, թե փոխաբերական իմաստով: Այս և այլ դեպքերում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ **ընդհանուր առմամբ բարձրաստիճան պաշտոնյաների խոսքը ավելի մեծ ազդեցություն ունի, ինչից ելնելով՝ ավելի խնդրահարույց կարող է դիտարկվել:**

Եվրոպական դատարանը, ըստ այդմ, հարցը դիտարկել է անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի համատեքստում՝ նշելով, որ այս դեպքում պետք է հաշվի առնվի՝ արդյոք հնչեցված խոսքը նպաստել է հանրային նշանակության հարցի շուրջ բանավեճին, խոսքի հասցեատիրոջ հայտնիության աստիճանը, խոսքին նախորդած՝ նրա վարքագիծը, խոսքի բովանդակությունը, ձևը և հետևանքները: Նշված վճռով Եվրոպական դատարանը արձանագրել է, որ **դիմումատուն կարող էր իր հասցեին հնչեցված մեղադրանքները հերքել առանց նման արտահայտությունների կիրառման, որոնք անձնական վիրավորանք են պարունակել, չեն նպաստել հանրային նշանակության հարցերի շուրջ քաղաքական բանավեճին և անցել են թույլատրելի քննադատության սահմանները:**[9]

Եվրոպական դատարանը նաև կարևորել է այն հանգամանքը, թե ում դեմ է խոսքն ուղղված: Մասնավորապես, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ թույլատրելի կամ իրավաչափ քննադատության սահմաններն ավելի լայն են, երբ այն ուղղված է քաղաքական գործիչների[10], հանրային իշխանության ներկայացուցիչների և հանրային ծառայողների, քան մասնավոր անձանց նկատմամբ:[11]

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ վիրավորական արտահայտությունները չեն օգտվում Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո տրամադրվող պաշտպանությունից այն դեպքում, երբ դրանց միակ նպատակը վիրավորելն է, և դրանք այլ կերպ չեն նպաստում հանրային

---

[9] Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի (Mesic v. Croatia) գործով 2022 թվականի մայիսի 5-ի վճիռ, դիմում no. 19362/18, §§ 84-85, 101-102, 104-105

[10] Տես, օրինակ, Լոբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 54, Ռոզեյրո Բենտոն ընդդեմ Պորտուգալիայի (Roseiro Bento v. Portugal) գործով 2006 թվականի ապրիլի 18-ի վճիռը, դիմում no. 29288/08, § 42n

[11] Տես, օրինակ, Չոլակովն ընդդեմ Բուլղարիայի (Cholakov v. Bulgaria) գործով 2013 թվականի հոկտեմբերի 1-ի վճիռը, դիմում no. 20147/06, § 29

կարևորություն ունեցող հարցի քննարկմանը կամ հատում են թույլատրելի քննադատության սահմանները: Միաժամանակ, մասնավոր անձանց նկատմամբ թույլատրելի քննադատության սահմաններն ավելի նեղ են, քան քաղաքական գործիչների և հանրային ծառայողների:

Միաժամանակ, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ քաղաքական խոսքի կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բանավեճերի սահմանափակման շրջանակը հատկապես նեղ է:[12] Եվրոպական դատարանն ընդգծել է, որ հանրային բանավեճի մասնակցող յուրաքանչյուր անձ չպետք է հատի որոշակի սահմաններ՝ հատկապես կապված այլոց հեղինակության կամ իրավունքների նկատմամբ հարգանքի հետ, միաժամանակ, չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանը թույլատրելի է[13]:

Եվրոպական դատարանը, միաժամանակ, արձանագրել է, որ քաղաքական դերակատարները ունեն նաև պարտականություններ և պատասխանատվություն: Ըստ այդմ, Եվրոպական դատարանը կարևոր է համարել, որ քաղաքական գործիչները, հանրային կերպով արտահայտվելիս, խուսափեն այնպիսի մեկնաբանություններից, որոնք կարող են հանգեցնել անհանդուրժողականության, ինչպես նաև հատկապես զգուշավոր լինեն ժողովրդավարությունը և դրա սկզբունքները պաշտպանելու հարցում՝ առաջնորդվելով իրենց հիմնական՝ կառավարելու նպատակով:[14]

Անդրադառնալով համացանցում արտահայտման ազատությանը, այդ թվում՝ կապված քաղաքական խոսքի և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ քննարկումների հետ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ համացանցը դարձել է արտահայտման ազատության իրավունքի իրացման առանցքային միջոցներից մեկը, որը տրամադրում է էական գործիքներ քաղաքական և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին առնչվող միջոցառումների և քննարկումների մասնակցելու համար: Այնուամենայնիվ, համացանցի գործածումը պարունակում է նաև որոշակի ռիսկեր. համացանցով տարածվող բովանդակությունը և հաղորդակցությունը շատ ավելի մեծ ռիսկ են ներկայացնում մարդու իրավունքները և ազատությունները, հատկապես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը վնասելու տեսանկյունից: Զրպարտությունը և հակահիրավական խոսքի այլ դրսևորումները, այդ թվում՝ ատելության խոսքը և բռնության հրահրող խոսքը, կարող են տարածվել այնպիսի արագությամբ, ինչպես նախկինում երբեք հնարավոր չէր՝

---

[12] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 43

[13] Տես, օրինակ, Ֆլյոդին ընդդեմ Ֆրանսիայի (Fleury v. France) գործով 2010 թվականի մայիսի 11-ի վճիռը, դիմում no. 29784/06, § 45

[14] Տես Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 64 և Ֆերետն ընդդեմ Բելգիայի (Feret v. Belgium) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 15615/07, § 75

ամբողջ աշխարհում, մի քանի վայրկյանի ընթացքում, և երբեմն կարող են հասանելի մնալ երկարատև ժամանակի ընթացքում:

Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը արձանագրել է, որ համացանցում տարբեր հարթակները հաճախ ունեն հաղորդակցության առանձնահատկություններ, օրինակ՝ մեկնաբանությունները հաճախ խոսակցական, ժարգոնային կամ գռեհիկ լեզվով են գրվում:

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ **երբ քաղաքական գործիչներն օգտագործում են սոցիալական ցանցերը քաղաքական նպատակներով, նրանք կրում են նաև որոշակի պարտականություններ և պատասխանատվություն:** Նշված պարտականությունների և պատասխանատվության առկայությունը կապված է հասարակությունում քաղաքական գործիչների առանձնահատուկ դերի և կարգավիճակի հետ, որոնցից ելնելով՝ նրանք առավել հավանական է, որ ազդեցություն կունենան ընտրողների վարքագծի վրա, ինչից ելնելով նրանք պետք է առավել մեծ զգոնություն դրսևորեն: Ըստ այդմ, Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը արտահայտման ազատության իրավունքի խախտում չի արձանագրել այն դեպքում, երբ տեղական ընտրություններում թեկնածուին քրեական պատասխանատվության էին ենթարկել (տուգանքի տեսքով) այն բանի համար, որ վերջինս չի հեռացրել իր գրառման ներքո այլ օգտատերերի կողմից արված՝ ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները:

Եվրոպական դատարանը նաև ընդգծել է, որ նշված մեկնաբանությունը չպետք է հասկանալ որպես քաղաքական խոսքի վերաբերյալ Եվրոպական դատարանի արդեն իսկ առկա նախադեպային իրավունքը վերացնող:[15]

Հանձնաժողովը գտնում է, որ այս մոտեցումը լրացուցիչ ընդգծում է համացանցում քաղաքական գործիչների առանձնակի զգոնություն դրսևորելու և պարտականություններ ու պատասխանատվություն կրելու հանգամանքը՝ միաժամանակ ճանաչելով քաղաքական բանավեճի շրջանակներում արտահայտման ազատության ավելի լայն սահմանները:

2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 08/2024-Վ/Վ եզրակացությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ քաղաքական բանավեճի շրջանակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բարեկրթության, քաղաքավարության, զսպվածության և այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականության խախտում արձանագրելու շեմն ավելի բարձր է, քան այլ լիազորությունների կատարման շրջանակներում դրսևորած վարքագծի դեպքում: Նույն եզրակացությամբ Հանձնաժողովը նշել է, որ անգամ քաղաքական բանավեճի շրջանակներում կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել.

---

[15] Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Sanchez v. France [GC]) գործով 2023 թվականի մայիսի 15-ի վճիռ, դիմում no. 45581/15

խիստ անձնական բնույթի կամ քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտությունների կիրառումը չի կարող Վարքագծի կանոնագրքի 36-37-րդ կետերի համատեքստում իրավաչափ դիտվել, անգամ երբ խոսքը գնում է խորհրդարանում կամ դրա հետ համեմատելի այլ ատյաններում քաղաքական բանավեճի մասին:

Ըստ այդմ, նշված եզրակացության շրջանակներում Հանձնաժողովն արձանագրել է, որ **խիստ անձնական բնույթի կամ քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտությունների կիրառումը կխախտի բարեկրթություն դրսևորելու պահանջը:**

Հանձնաժողովն ընդգծում է, որ նույնական չափանիշը վերաբերելի է Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետին. քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից քաղաքական բանավեճի շրջանակներում կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի վերաբերյալ սոցիալական ցանցերում գրառումներ կատարելիս Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտում արձանագրելու շեմն ավելի բարձր է, քան քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից՝ այլ թեմաներով կատարված գրառումների կամ այլ պաշտոնատար անձանց կողմից կատարված գրառումների պարագայում: Միաժամանակ, սա չպետք է մեկնաբանվի որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից սոցիալական մեդիայում արտահայտման ազատության իրավունքի կիրառման բացարձակություն. Հանձնաժողովն ընդգծում է, որ անգամ քաղաքական խոսք պարունակող կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կատարված գրառումները կարող են հատել իրավաչափության սահմանը՝ հանգեցնելով Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտման:

Հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 08/2024-Վ/Վ եզրակացությամբ Հանձնաժողովի մեկնաբանությունները, ինչպես նաև Եվրոպական դատարանի վերոգրյալ նախադեպային պրակտիկան՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սոցիալական մեդիայում ցանկացած պարագայում բարեկրթության և հարգալիրության սկզբունքներին համահունչ չեն կարող համարվել այնպիսի գրառումները, որոնք ներառում են արտահայտման ազատության իրավունքով չպաշտպանվող խոսք, մասնավորապես՝

1) խիստ անձնական բնույթի կամ քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտություններ ներառող խոսքը,

2) թույլատրելի քննադատության սահմանները հատող խոսքը,

3) ազգության, ռասայի, կրոնական պատկանելիության, սեռի, տարիքի, առողջության և ցանկացած այլ անձնական կամ սոցիալական բնույթի հատկանիշի հիմքով ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք կամ խտրականություն հարուցող խոսքը,

4) բռնության կոչերը կամ քարոզումը կամ արդարացումը,

5) զրպարտությունը:

Հանձնաժողովը նաև ընդգծում է, որ անկախ այն հանգամանքից, որ համացանցում, հատկապես՝ սոցիալական ցանցերում, հաճախ օգտատերերը գործածում են խոսակցական, ժարգոնային, անգամ գռեհիկ բնույթի բառեր ու արտահայտություններ, բարեկրթության և հարգալիրության սկզբունքներին համահունչ չեն կարող համարվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից խիստ անպատշաճ, գռեհիկ արտահայտությունների գործածումը: Այս մոտեցումը պայմանավորված է բարեվարքության սկզբունքից բխող՝ պաշտոնին վայել վարքագիծ դրսևորելու պարտականությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ համացանցում հաղորդակցության առանձնահատկություններից ելնելով՝ պաշտոնատար անձինք պարտավոր են առավել բարձր զգոնություն և զգուշավորություն դրսևորել գրառումներ կատարելիս՝ նկատի ունենալով այն ազդեցությունը, որը նրանց խոսքը կարող է ունենալ լսարանի վրա, ինչն արձանագրվել է նաև Եվրոպական դատարանի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ արտահայտման վերոգրյալ բոլոր ձևերը ողջամտորեն կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը: Այնուամենայնիվ, այս հանգամանքի գնահատումը պետք է իրականացվի յուրաքանչյուր դեպքով՝ առանձին՝ հիմք ընդունելով ոչ միայն կիրառված արտահայտությունների նշանակությունը, բնույթը և ընդհանուր գրառման բովանդակությունը, այլ նաև գրառման հանրային ընկալումը:

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով սույն վարույթի շրջանակներում Գ.Պապոյանի կողմից կատարված գրառումները՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը՝

Գրառում 2-ը և 3-ը վերաբերել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործունեությունը քննադատող անձանց և հասցեագրում են նրանց քննադատությունը: Այսպես, Գրառում 2-ով անդրադարձ է կատարվում «իրենց ընդդիմադիր հռչակած որոշ ծակ պրոֆեսոր «տնտեսագետների», «լրագրողների» ու այլ ինքնահռչակների» ամբողջ տարվա ընթացքում կատարված խոսքերին տնտեսական ճգնաժամի մասին, որոնց Գ.Պապոյանը հակադարձում է տնտեսական ակտիվության աճի վերաբերյալ ցուցանիշները վկայակոչելով՝ նշված անձանց քննադատությունը անվանելով «ոռնալ և գուժել»: Գրառում 3-ով անդրադարձ է կատարվում կոնկրետ անձի պնդումներին անկանխիկ վճարումների վերաբերյալ՝ նշված անձին կոչելով «սև հաշվապահություն սպասարկող մի հաշվապահական ծառայությունների դալալ», նշվում է, որ նա «ապուշություններ» է տարածում, ինչպես նաև նշված անձի դրդապատճառների կապակցությամբ նշվում է, որ քննադատության նպատակն այն է, որ նշված անձի հաճախորդները, ՀԴՄ չտալով, ստվերային շրջանառություն ունենալով, ապահովեն «իրենց ու դալալի բարեկեցությունը»:

Հանձնաժողովը նախ ընդգծում է, որ Գրառում 3-ով կատարված արտահայտությունները պարունակում են առերևույթ հանցանքի հատկանիշներ պարունակող արարք գործելու (հարկերի վճարումից խուսափելու, «սև հաշվապահություն» սպասարկելու) կամ նման դիտավորության մեղադրանքներ, որոնք այլ պայմաններում կպահանջեին հստակ փաստական հենքի առկայություն՝ դրա բացակայության դեպքում համարվելով զրպարտություն, սակայն քանի որ Գ.Պապոյանի գրառմամբ չի նշվել դրա հասցեատերը, այսինքն՝ անձը, ում մասին կատարվել է գրառումը, այն ողջամտորեն չէր կարող բացասական ազդեցություն ունենալ նշված անձի հեղինակության և բարի համբավի վրա, ուստի այս տեսանկյունից գրառումը չի հատում իրավաչափության սահմանները:

Նշված գրառումներով կիրառված մի շարք արտահայտությունների լեզվաբանական վերլուծությանը Հանձնաժողովն անդրադարձել է Հարուցման որոշմամբ՝ արձանագրելով, որ «ոռնալ», «դալլալ», «ապուշություն» բառերի և «ծակ պրոֆեսոր» արտահայտության լեզվաբանական վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք որոշակի համատեքստում գործածվելիս կարող են ունենալ արհամարհական կամ վիրավորական նշանակություն և այդպիսի իմաստ կամ տոնայնություն հաղորդել նաև այն գրառումներին, որոնցում դրանք գործածվել են:

Այսպես՝

1) «ոռնալ» բառը, բացի իր առաջնային իմաստից, օգտագործվում է նաև փոխաբերական մի շարք իմաստներով: Այսպես, որևէ մեկին քննադատող, ստորացնող խոսույթում այն կարող է ընկալվել որպես արհամարհական, վիրավորական բառ՝ «գազազած՝ կատաղի ձայն հանել, կատաղի գոռում-գոչում բարձրացնել» (Էդվարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 566): Որպես նմանաձայնություն՝ փոխաբերական իմաստով առաջնային իմաստը կարող է վերագրվել մարդուն՝ նշանակելով, որ վերջինս բարձրաձայն ու անցանկալի վարքագիծ ունի: **Բառի այդ իմաստը բառարաններում ունի «արհամարհական» նշումը:**

2) «Դալալ/դալլալ» բառը գավառական, բարբառային բառ է, որը նշանակում է «մունետիկ, փողոցներում բարձր ձայնով լուրեր հայտնող, չարչի» (Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 482, «Հայոց լեզվի բարբառային բառարան», Հրաչյա Աճառյան, Երևան, 2001, Հատոր 1, էջ 298):

3) «Ապուշություն» բառը հայերենի բացատրական բառարաններում բացատրվում է՝ «տխմարություն, դատարկամտություն, անասնամտություն, տավարամտություն, հիվանդամտություն, պակասամտություն» (Աշոտ Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 84), «ապուշի վարմունք, հիմարական արարք, հոգեկան ու մտավոր անզարգացություն (իդիոտիզմ)» (Էդուարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 1, էջ

100), «խելազուրկ լինելը» (Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 1, էջ 210):

4) «Ծակ պրոֆեսոր» (հոմանշային դարձվածքներ՝ «ծակ գիտնական»/«ծակ փիլիսոփա») արտահայտությունը հիմնականում օգտագործվում է հայերեն ժարգոնային խոսվածքում, երբ խոսքը գնում է այնպիսի մարդու մասին, ով պակաս պրոֆեսիոնալ է կամ չունի համապատասխան փորձ ու գիտելիք, սակայն արտահայտվում է տվյալ թեմայի վերաբերյալ: Երբեմն արտահայտությունն օգտագործվում է խիստ քննադատական կերպով՝ նշանակելով, որ անձը չի հասկանում շոշափվող թեմաները և ինքնակոչ է: Պետք է նկատել, որ արտահայտության բաղադրիչ հանդիսացող «ծակ» բառը հայերենի բացատրական բառարաններում հանդիպում է «թերի, պակասավոր» իմաստներով (նույն իմաստից առաջացած «ծակ փիլիսոփա դարձվածքն է օրինակում) (Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 319): Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում (Երևան, 1976, հ.1, էջ 623) «ծակ փիլիսոփա» դարձվածքը բացատրվում է՝ «իր կարծիքով խելամիտ, բայց իրականում անհեթեթություններ խոսող մարդ, իմաստակ»: «Ծակ» բառի այս իմաստով կազմված արտահայտությունները բառարաններում ունեն նաև «արհամարհական» նշումը:

Անդրադառնալով Դիրքորոշմամբ նշված բառերի նշանակության վերաբերյալ կատարված մեկնաբանություններին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը՝

1) «ծակ պրոֆեսոր» արտահայտության առթիվ Դիրքորոշմամբ նշվել է, որ այն շատ օգտագործելի է քաղաքական գործիչների համար և համացանցում որոնելու արդյունքում տեսնում ենք, որ բազմաթիվ քաղաքական գործիչներ ու պաշտոնյաներ իրենց խոսքում գործածում են այս դարձվածքը: Նշվել է նաև, որ այն ժողովրդախոսակցական ձև է և արհամարհական նշանակություն չունի, իսկ «ծակ» և «պրոֆեսոր» բառերը պետք է դիտարկվեն համադրության մեջ: Այս առնչությամբ Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ առօրյա խոսակցական, ժողովրդախոսակցական արտահայտությունները ևս ունեն կիրառության սահմանափակումներ և արտահայտության «արհամարհական» նշանակության վերաբերյալ Հանձնաժողովի՝ Հարուցման որոշմամբ կատարված եզրահանգումները հիմնվել են հայոց լեզվի բառարաններում առկա տվյալների վրա: Ինչ վերաբերում է դարձվածքի մեջ մտնող «ծակ» բառի առանձին իմաստին, այն տրվել է՝ ելնելով դարձվածքի ընդհանուր իմաստի և դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի մեջ գոյություն ունեցող հարաբերության տեսակներից: Ըստ այդմ՝ «դարձվածքային միասնություն» խմբի մեջ մտնում են դարձվածաբանական այնպիսի միավորներ, որոնց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածքը կազմող բաղադրիչ բառերի առանձին, փոխաբերական իմաստով (Սուքիասյան Ա. Մ., Սուքիասյան Ք. Ա., Ֆելեքյան Մ. Հ., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն,

բառագիտություն), Երևան, 2017): Ուստի Հանձնաժողովը նպատակահարմար է գտել տալ նաև «ծակ պրոֆեսոր» դարձվածքը կազմող «ծակ» բառի փոխաբերական իմաստները:

2) Դիրքորոշմամբ «ապուշություն» բառի առթիվ նշվել է, որ այն որևէ անձի ուղղված չի եղել, մտքի կոնտեքստում հնչել է ընդհանրական՝ ներկայացնելով իրավիճակի ոչ խելամիտ լինելը և չի ունեցել վիրավորական նշանակություն կամ այդպիսի իմաստ: Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ այս բառի ամենատարածված հոմանիշներն են հիմարությունն ու անմտությունը, որոնք ապուշության հետ միասին որևէ կերպ չեն կարող համարվել անօգտագործելի հանրային ծառայության կամ քաղաքական պաշտոնյաների համար, քանի որ գրական հայերենում օգտագործվող բառեր են, որոնք նկարագրում են ոչ խելամիտ իրավիճակ, երևույթ: Սակայն զարմանալիորեն Հանձնաժողովը չի նկատել այս հոմանիշները և այլ հոմանիշներ է բերել վարույթ հարուցելու հիմնավորման մեջ: Այս առթիվ Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Հանձնաժողովը «ապուշություն» բառը բացատրել է հայոց լեզվի՝ լայն կիրառություն ունեցող բացատրական բառարանների միջոցով՝ առաջնորդվելով հոմանիշ բառերի՝ հայոց լեզվում ընդունված սահմանմամբ. հայերենում հոմանիշներ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստներ և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզաարտահայտչական գունավորմամբ, ինչպես նաև գործածականությամբ և ուրիշ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ: Ելնելով նշյալ սահմանումից և բառարաններում տրված բացատրություններից՝ ակներև է, որ Դիրքորոշմամբ նշված «հիմարություն, անմտություն» հոմանիշները չեն հանդիսանում ամենատարածվածները, քանզի դրանք բառարաններում բերված չեն իբրև բառի բացատրության առաջնային իմաստ կամ առաջնային հոմանիշ: Հանձնաժողովը վերահաստատում է Հարուցման որոշմամբ ներկայացված մեկնաբանությունն առ այն, որ «ապուշություն» բառը հայերենի բացատրական բառարաններում բացատրվում է՝ «տխմարություն, դատարկամտություն, անասնամտություն, տավարամտություն, հիվանդամտություն, պակասամտություն», «ապուշի վարմունք, հիմարական արարք, հոգեկան ու մտավոր անզարգացություն (իդիոտիզմ)», «խելազուրկ լինելը», և գտնում է, որ բառն ունի արհամարհական, ինչ-որ դեպքերում նաև վիրավորական նշանակություն: Ընդ որում, Հանձնաժողովն արձանագրում է, որ բառի կիրառումը Գրառում 3-ում ուղղված է եղել կոնկրետ անձի, որին նույնականացնող տվյալներ պարզապես չեն նշվել: Մասնավորապես, Գրառում 3-ով նշվել է, որ Գ.Պապոյանը «սև հաշվապահություն սպասարկող մի հաշվապահական ծառայությունների դալալի» անունը «հատուկ չի տալիս, որպեսզի չտարածի իր ապուշությունները», ուստի «ապուշություն» բառը կիրառվել է՝ նկարագրելով նշված անձի գրառումը կամ մեկնաբանությունները, որոնց վերաբերում է Գրառում 3-ը:

3) «ոռնալ» բառի կապակցությամբ Դիրքորոշմամբ նշվել է, որ այն Գ.Պապոյանի կողմից օգտագործվել է փոխաբերական իմաստով՝ չակերտների մեջ: Նշվել է, որ մարդը չի կարող ոռնալ, ինչպես, օրինակ, քամին չի կարող ոռնալ, սակայն փոխաբերական իմաստով այն օգտագործվում է տարբեր իմաստներով, ինչպիսին է գոռում-գոչյում բարձրացնել կամ ուժգին ձայն արձակել: Այս համատեքստում «ոռնալ» բառը փոխաբերական իմաստով նշանակում է բարձրաձայն, գոռում գոչյումով քննադատել: Այս առումով հենց սա է նկատի ունեցել, հատկապես երբ բառը գրել է չակերտների մեջ՝ դրանով իսկ ընդգծելով փոխաբերական բնույթը: Հանձնաժողովն այս առթիվ նախ ընդգծում է, որ «ոռնալ» բառը ոչ Գրառում 1-ում, ոչ Գրառում 2-ում չի կիրառվել չակերտներում, միաժամանակ, Գրառումների ընդհանուր բովանդակությունից ակներև է, որ բառը կիրառվել է փոխաբերական իմաստով, որը կապ չունի չակերտների կիրառության հետ: Ըստ այդմ, Հարուցման որոշմամբ Հանձնաժողովն անդրադարձել է նաև բառի փոխաբերական իմաստներին՝ նշելով, որ հենց այդ իմաստով բառը բառարաններում ունի «արհամարհական» նշումը:

4) «դալլալ» բառի առնչությամբ Դիրքորոշմամբ նշվել է, որ այն բարբառային բառ է, չունի բացասական դրսևորում և ուղղված չէ որևէ անձի նկատմամբ: Դիրքորոշման համաձայն՝ քաղաքական խոսքը ավելի ազդեցիկ, հետաքրքիր դարձնելու համատեքստում կարևոր է, հատկապես, եթե այն ուղղված չէ կոնկրետ անձի դեմ: Այն օգտագործվել է փոխաբերական իմաստով, սակայն անգամ ոչ փոխաբերական իմաստով՝ այն է՝ «փողոցում բարձր ձայնով լուրեր հայտնող վաճառական» չունի որևէ բացասական իմաստ: Այս առնչությամբ Հանձնաժողովն ընդգծում է, որ այն հանգամանքը, որ բառն իր առաջնային նշանակությամբ չունի բացասական իմաստ, դեռևս չի նշանակում, որ այն չի կարող գործածվել որպես այդպիսին: Մասնավորապես, տվյալ պարագայում բառի գործածումը հնչում է որպես ծաղրանք և գրառմանը այլ արտահայտությունների կիրառման ու ընդհանուր ոճի հետ միասին հաղորդում ծաղրական տոն, ինչից ելնելով՝ Հանձնաժողովը այն հիմք է ընդունել Հարուցման որոշումը կայացնելիս:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը վերահաստատում է, որ վերոնշյալ բառերի գործածումը կարող էր Գ.Պապոյանի գրառումներին հաղորդել արհամարհական, անգամ վիրավորական նշանակություն: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ նշված գրառումները կատարվել են ի պատասխան ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն ուղղված քննադատության և նաև նպատակ են ունեցել հասցեագրել նշված քննադատության շրջանակներում կատարված մեղադրանքները, ըստ այդմ, միայն որոշակի անձանց վիրավորելու նպատակ չեն ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված արտահայտությունները իրենց բնույթով խիստ գռեհիկ չեն, գտնվում են վիրավորական համարվելու սահմանագծին՝ առավելապես

կրելով արհամարհական բնույթ՝ Հանձնաժողովը գտնում է, որ նշված արտահայտությունները չեն կարող համարվել խիստ անձնական բնույթի վիրավորանք:

Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ «շունը հաչում է, քարավանը՝ գնում» դարձվածքի վերաբերյալ Դիրքորոշմամբ նշված դատողություններին, քանի որ դրա կիրառումը Հանձնաժողովի կողմից Հարուցման որոշմամբ չի համարվել առերևույթ խախտման հատկանիշներ պարունակող գործողություն: Այսպես, Հարուցման որոշմամբ արձանագրվել է, որ նշված դարձվածքը նշանակում է «ինչքան ուզում են, թող չարախոսեն, կարևորություն չպետք է տալ, բամբասանքը՝ վայրահաչությունը բանի տեղ չդնել», իսկ դարձվածքում գործածվող առանձին բառերի նշանակությունն էական չէ դարձվածքի մեկնաբանությունը և Կանոնագրքի դրույթներին դրա կիրառման համապատասխանությունը գնահատելիս:

Հանձնաժողովը հարկ է համարում նաև անդրադառնալ այն հանգամանքին, որ նշված արտահայտությունները կիրառվել են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից՝ սոցիալական ցանցում նրա էջով:

Հարուցման որոշմամբ այս առթիվ նշվել է, որ հանրային ընկալման տեսանկյունից նաև կարևոր է, որ «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջը, որով կատարվել են գրառումները, ծառայում է որպես ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնական էջ: Այսպես, էջում նշված է, որ այն ՀՀ էկոնոմիկայի նախարարինն է, ներառված է նախարարի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն, էջի մի նկարում Գ.Պապոյանն է՝ ՀՀ դրոշի կողքին, պաշտոնական հագուստով, մյուս նկարում՝ ՀՀ տարածքի ուրվագիծը, իսկ հետին պլանում՝ Արագած լեռը: Ընդ որում, նշված էջով նախարարը հիմնականում կիսվում է պաշտոնական նորություններով՝ հրապարկելով իր պաշտոնական հանդիպումների, այցերի վերաբերյալ և ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասության ոլորտին առնչվող այլ տեղեկատվություն:

Դիրքորոշմամբ այս առթիվ նշվել է, որ նախ անհայտ է՝ ինչ է «պաշտոնական էջը», նշված էջում բացակայում է Ֆեյսբուք սոցիալական ցանցի «verified» նշանը, իսկ էջը քաղաքական գործչի, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության վարչության նախագահի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ, էկոնոմիկայի նախարարի քաղաքական պաշտոնը զբաղեցնող Գևորգ Պապոյանի անձնական էջն է (չկա որևէ նշում նրա մասին, որ դա պաշտոնական էջ է), որը բացվել է 2018թ. խորհրդարանական ընտրություններից անմիջապես առաջ՝ նոյեմբեր ամսին, երբ Գ.Պապոյանը սկսել է զբաղվել ակտիվ քաղաքականությամբ, եղել է ԱԺ պատգամավորի ռեյտինգային և համամասնական ընտրակարգով թեկնածու և այն Գ.Պապոյանի և իր ընտրողների, համակիրների և ՀՀ քաղաքացիների միջև Գ.Պապոյանի հիմնական քաղաքական խոսքի փոխանցման և փոխանակման եղանակն է, որի միջոցով, որպես էկոնոմիկայի նախարար՝ Գ.Պապոյանը նաև տեղեկացնում է իր քաղաքական գործունեության և նախարարության քաղաքականությունների մասին, իսկ նախկինում տեղեկացրել է իր

խորհրդարանական աշխատանքի մասին, ապագայում էլ՝ հետագա քաղաքական գործունեության:

Հանձնաժողովն այս առնչությամբ արձանագրում է, որ այն պայմաններում, երբ ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ ներքին իրավական ակտերով կամ ուղեցուցային բնույթի փաստաթղթերով նախատեսված չեն սոցիալական ցանցերում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անձնական և պաշտոնական էջերի տարանջատման, նշված էջերի վարման մեթոդաբանության հետ կապված կարգավորումներ՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պետք է լրացուցիչ զգուշավորություն դրսևորեն սոցիալական ցանցերում էջերի վարման ընթացքում և հաշվի առնեն, որ նշված էջերը հանրության կողմից ողջամտորեն կարող են ընկալվել որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի էջեր, իսկ դրանցում ներկայացված կարծիքները՝ վերագրվել հանրային իշխանությանը կամ հանրային իշխանության կոնկրետ մարմնին: Տվյալ դեպքում «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջից ակներև է, որ այն վարում է ՀՀ էկոնոմիկայի նախարարը՝ նկատի ունենալով, որ այդ մասին նշված է էջում, ինչը տեսանելի է էջի առաջնային բացման ընթացքում, բացի այդ, էջով Գ.Պապոյանը հիմնականում կատարում է իր պաշտոնական գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակում՝ պաշտոնական այցերի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությունների և գործունեության: Ավելին, էջում ներառված է նախարարի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն: Ըստ այդմ, օբյեկտիվ դիտորդի կողմից էջը անխուսափելիորեն ընկալվելու է որպես ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ հանրության հետ հաղորդակցվելու նպատակով գործածվող հարթակ, ըստ այդմ, Հանձնաժողովը վերահաստատում է, որ նշված էջը ծառայում է որպես ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնական էջ՝ հիմք ընդունելով հենց այս օբյեկտիվ ընկալումը և էջում առկա հրապարակումների բովանդակությունը: Ընդ որում, Հանձնաժողովն ընդգծում է, որ նշված էջը էապես տարբերվում է Գ.Պապոյանի մեկ այլ՝ «Գևորգ Պապոյան» էջից[16], որով թեև ևս նշված է, որ էջը վարող անձը հանդիսանում է Էկոնոմիկայի նախարարը, սակայն դրանով, բացի «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջով կատարված գրառումները վերահրապարակելուց, Գ.Պապոյանը նաև կատարում է իր կուսակցական գործունեության վերաբերյալ գրառումներ, անձնական բնույթի լուսանկարներ և գրառումներ: Ըստ այդմ, այն նույն կերպ չի ծառայում որպես հանրության հետ ի պաշտոնե հաղորդակցվելու և տեղեկատվություն փոխանցելու հարթակ:

Ինչ վերաբերում է Դիրքորոշմամբ կատարված դատողությանը առ այն, որ «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջում որևէ նշում չկա այն մասին, որ այն պաշտոնական էջ է, հարկ է նկատել, որ Վարքագծի կանոնագրքի 49-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը սոցիալական մեդիայում

[16] Հասանելի՝ https://www.facebook.com/G.Papoyan.g

հրապարակումներ և մեկնաբանություններ կատարելիս պարտավոր է հստակ նշել դրա՝ հանրային իշխանության մարմնի պաշտոնեական դիրքորոշում կամ սեփական տեսակետ լինելու մասին: Նշված կանոնի բովանդակությունից բխում է, որ հրապարակումները և մեկնաբանությունները կարող են վերագրվել հանրային իշխանության մարմնին, եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը չի հստակեցնում, որ դրանք իր սեփական կարծիքն են: Ուստի, Հանձնաժողովը գտնում է, որ այն հանգամանքը, որ որևէ էջում նշված չէ դրա պաշտոնական լինելու մասին, չի ենթադրում, որ տվյալ էջը չի կարող ընկալվել որպես այդպիսին, ընդ որում, ճիշտ հակառակը, այն դեպքում, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձը ցանկանում է, որպեսզի սոցիալական ցանցում նրա էջը ընկալվի որպես անձնական կամ էջում կատարվող որոշակի հրապարկումը՝ որպես իր սեփական կարծիքի արտահայտում, նա պետք է այդ մասին նշում կատարի տվյալ էջում կամ տվյալ հրապարակման մեջ:

Այնուամենայնիվ, անգամ արձանագրելով, որ «Gevorg Papoyan / Գևորգ Պապոյան» էջը ծառայում է որպես հասարակության հետ ի պաշտոնե հաղորդակցության և տեղեկատվության փոխանցման էջ, այն է՝ պաշտոնական էջ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Գրառում 2-ը և Գրառում 3-ը չեն հատել Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի իմաստով իրավաչափ խոսքի սահմանները՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

1) դրանք կատարվել են ի պատասխան ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն ուղղված քննադատության և նաև նպատակ են ունեցել հասցեագրելու այդ քննադատությունը, ըստ այդմ՝ չեն ունեցել բացառապես վիրավորելու նպատակ,

2) դրանք չեն պարունակել խիստ անպատշաճ, գռեհիկ արտահայտություններ, ինչպես նաև այնպիսի արտահայտություններ, որոնք կարող են համարվել խիստ անձնական բնույթի վիրավորանք,

3) կատարված արտահայտությունները առավելապես արհամարհական և ծաղրական բնույթ ունեն, ավելին՝ Գրառում 3-ը առավել խիստ ծաղրական բնույթ ունի՝ հաշվի առնելով կիրառված արհամարհական և վիրավորական արտահայտությունների բնույթը և քանակը, ինչպես նաև դրանց գործածման ընդհանուր համատեքստը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Գ.Պապոյանի՝ քաղաքական պաշտոն զբաղեցնելու և քաղաքական գործիչ հանդիսանալու հանգամանքները, նշված արտահայտությունների գործածումը կարող է համարվել որոշակիորեն ցնցող կամ սադրիչ, սակայն իրավաչափ քննադատության սահմանները չանցնող խոսք,

4) նշված գրառումները չեն ունեցել մեծ հանրային արձագանք: Այսպես, Գրառում 3-ը ունեցել է 278 արձագանք (հավանում), իսկ գրառման մեկնաբանություններից միայն մեկով է նշվել, որ այն հարիր չէ Կառավարության անդամին: Գրառում 2-ը ունեցել է 978 արձագանք, իսկ մեկնաբանություններով որևէ օգտատերի կողմից չի նշվել գրառման՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձին ոչ վայել լինելու մասին: Ըստ այդմ,

նշված գրառումների վերաբերյալ բարեվարքության և հարգալիրության սկզբունքի խախտման առնչությամբ միակ արձագանքը սույն եզրակացության 1.2.3 կետով ներկայացված՝ «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիայի» կառավարման խորհրդի՝ ՀՀ վարչապետին հասցեագրված բաց նամակն է: Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված նամակը էական նշանակություն ունի Գ.Պապոյանի գրառումներին հանրային արձագանքը գնահատելու տեսանկյունից, այնուամենայնիվ, հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքները՝ կապված գրառումների բովանդակության վերլուծության հետ և նկատի ունենալով նշված նամակից զատ՝ հանրային լայն արձագանքի բացակայությունը՝ Հանձնաժողովը գտնում է, որ այն բավարար չէ մեծ հանրային արձագանքի առկայության մասին փաստելու համար:

Գրառում 1-ի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ դրա բովանդակությունից ակնհայտ չէ, թե ում դեմ է այն ուղղված, մասնավորապես, նշված է՝ «մինչ ոմանք ոռնում են Հայաստանի տնտեսական հաջողություններից, հերթական խոշորագույն ներդրումային ծրագիրը շուտով կմեկնարկի»: Հանձնաժողովը գտնում է, որ ի տարբերություն Գրառումներ 2-ի և 3-ի, Գրառում 1-ն ուղղված չէ քննադատություն հասցեագրելուն, ինչի պարագայում «ոռնալ» բառի կիրառումը ընկալվում է ոչ թե կոշտ հակադարձում, այլ վիրավորանք: Գրառմամբ Գ.Պապոյանը նաև կիսվել է ԱՄՆ դեսպանության կատարած հրապարակմամբ առ այն, որ Ամուլսարի հանքարդյունաբերության ծրագիրը վերսկսվում է, միաժամանակ, որոշ անձանց «ոռնալու» վերաբերյալ լրացումը որևէ կերպ չի լրացնում այս տեղեկատվությունը և լրացուցիչ տեղեկություն կամ իմաստ չի հաղորդում, գաղափար չի փոխանցում:

Հարուցման որոշմամբ արձանագրվել է, որ նշված գրառումը ստացել է բուռն հանրային արձագանք, մասնավորապես, սոցիալական մեդիայի մի շարք օգտատերեր արտահայտել են իրենց դժգոհությունը կամ վրդովմունքը: Միաժամանակ, այս արձագանքին ի պատասխան՝ Գ.Պապոյանը նախ փորձել է պարզաբանել Գրառում 1-ի նշանակությունը՝ մեկնաբանություններում նշելով, որ «հայտնի ասացվածքը վերաբերում է որոշ նախկին պաշտոնյաների», այնուհետև խմբագրել է այն (Գրառում 4) և վերջապես՝ հեռացրել: Հանձնաժողովն արձանագրում է, որ գրառումը խմբագրելով՝ «ոռնալ» բառը փոխարինվել է տոնայնությամբ շատ ավելի մեղմ՝ «տանջվել» բառով, և կատարվել է հստակեցում առ այն, որ գրառումը վերաբերում է նախկին պաշտոնյաների: Հարկ է նկատել, որ հանրության կողմից գրառումը ընկալվել էր որպես Ամուլսարի հանքի շահագործմանը դեմ հանդես եկող քաղաքացիներին վերաբերյալ գրառում, ինչից ելնելով՝ այս հստակեցումը էական էր հանրային ընկալմանը արձագանքելու տեսանկյունից:

Նկատի ունենալով, որ Գ.Պապոյանը արագ արձագանքել է գրառման հանրային ընկալմանը՝ նույն օրը խմբագրել է գրառումը՝ հանելով խնդրահարույց արտահայտությունը և կատարելով հստակեցում, իսկ այնուհետև հեռացրել է այն,

Հանձնաժողովը կարծում է, որ սա կարող է դիտարկվել որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր վարքագծի շտկում, որը ողջամտորեն կարող է նվազեցնել այդ վարքագծի հետևանքով հանրային իշխանության հեղինակությանը վնաս հասցնելու հավանականությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը կարծում է, որ նշված դեպքում վարքագծի կանոնի խախտման արձանագրումը առարկայազուրկ կլինի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից գրառմանն անմիջապես հաջորդած՝ նախկին վարքագծի հետևանքները մեղմող քայլերի ձեռնարկումը հաշվի առնելով, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ առկա չէ Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտում:

Վերոգրյալի լույսի ներքո Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ Դիրքորոշմամբ նշված մյուս առարկություններին:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի կողմից վարքագծի կանոնների խախտման բացակայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել Գևորգ Պապոյանին և Փայլակ Թադևոսյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**